

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի  
գիտական խորհրդի 06.12.21թ. կայացած թիվ 6.21-22 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 36 անդամներից 27-ը:

### **Հաստատվեց հետևյալ օրակարգը՝**

1. Ֆիզիկայի ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվությունը:

Նիստը վարեց պրոֆեսոր Ա. Կիրակոսյանը:

**Լսեցին՝** Ֆիզիկայի ֆակուլտետի դեկանի տարեկան հաշվետվությունը:

Պրոֆ. Կիրակոսյանը հաշվետվություն ներկայացնելու համար խոսքը փոխանցեց ֆակուլտետի դեկան պրոֆ. Ռ. Հակոբյանին:

Ռ.Հակոբյանը իր **ելույթում** ներկայացրեց բակալավրիատի երեք նոր մասնագիտությունները, որոնք գործում են ֆակուլտետում՝

- “Նանոֆիզիկա և առաջատար տեխնոլոգիաներ” մասնագիտությունը գործում է անցյալ տարվանից, ընդունվել են 11 ուսանող:
- “Տվյալների մշակումը ֆիզիկայում և արհեստական բանականություն” գործում է 2021 թ սեպտեմբերից և ընդունվել են 26 ուսանող:
- և “Երկակի նշանակության տեխնոլոգիաների ֆիզիկա” մասնագիտությունները գործում է 2021 թ սեպտեմբերից և ընդունվել են 10 ուսանող:

Այս տարի ֆակուլտետը կնքել է մի շարք պայմանագրեր, որոնք կնպաստեն ֆակուլտետի զարգացմանը և ուսանողների աշխատանքի տեղավորմանը՝ ուսման ավարտին:

Տարվա ընթացքում ֆակուլտետում անցկացվել են մի շարք սեմինարներ տարբեր թեմաներով: Սեմինարները ձայնագրվել են և հասանելի են ֆակուլտետի YouTube-յան ալիքում, ինչպես նաև ֆեյսբուքյան էջում:

Արտասահմանյան մեր հայտնի գիտնականների հետ միասին կազմակերպվում են հեռավար սեմինար “գրույցներ գիտնականի հետ” դպրոցականների համար:

Կազմակերպվել են 4 միջազգային համաժողովներ: Իրակացվում են ֆակուլտետի և ֆիզիկայի գովազդ ֆեյսբուքյան էջերով, ֆակուլտետի ինստագրամով, հեռուստատեսություններով, հայկական ռադիոյով և այլն: Ակտիվորեն համագործակցում ենք ԵՊՀ Ժուրնալիստիկայի ֆակուլտետի հետ, ֆիզիկան և ֆակուլտետը գովազդելու ուղղությամբ:

Ֆակուլտետի դասախոսները և ասպիրանտները ուսանողների հետ միասին կատարել են մի շարք այցելություններ ՀՀ տարբեր դպրոցներ, նպատակ ունենալով

ներկայացնել ֆակուլտետի նորությունները: Նաև, տարվա ընթացքում հյուրընկալվել են դպրոցականների խմբեր: Իրականացվում են նաև հեռավար հանդիպումներ ՀՀ դպրոցների աշակերտների հետ: Շարունակում է գործել "Սովորող ուսուցիչ" ծրագիրը: Կազմակերպվել են նախապատրաստական դասընթացներ դպրոցականների համար, 3 ձևաչափով:

Մեր ԱՄՆ-ի գործընկերների հետ համատեղ ստեղծել ենք Ֆիզիկայի ֆակուլտետների շրջանավարտների և ընկերների միություն (APAF): Հայ ֆիզիկոսների միջազգային միության հետ միասին ստեղծել ենք մենթորների ինստիտուտը և նոր ուսանողական կրթաթոշակ: Սահմանել ենք նաև Արցախյան պատերազմում զոհված, ֆիզիկայի ֆակուլտետի շրջանավարտ Էրիկ Գևորգյանի անվան կրթամրցանակ:

Ստեղծվել են և ստեղծման ճանապարհին են 4 նոր գիտական լաբորատորիաներ: :

Այս տարի ֆիզիկայի ֆակուլտետ են ընդունվել 73 ուսանող, որոնցից 22-ը "Ֆիզիկա", 4-ը՝ "Միջուկային ռեակտորների ֆիզիկա", 11-ը՝ "Նանոֆիզիկա և առաջատար տեխնոլոգիաներ" 26-ը՝ "Տվյալների մշակումը ֆիզիկայում և արհեստական բանականություն" և 10-ը՝ "Երկակի նշանակության տեխնոլոգիաների ֆիզիկա" մասնագիտություններով:

Իրականացվել են ուսանողների այցելություններ մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ, CANDLE, Ալիխանյանի անվան ազգային լաբորատորիա (ԵրՖԻ), LT-Pirkal, Աշտարակի ինստիտուտներ, ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտ:

Ֆակուլտետի ուսանողները ստացել են կրթաթոշակներ և մրցանակներ՝

- Անվանական կրթաթոշակներ - ԵՊՀ մրցանակ – 1, Գուրգեն Սահակյանի անվան մրցանակ – 1, Ալիխանյան եղբայրների անվան մրցանակ – 1, Վիկտոր Համբարձումյանի անվան մրցանակ - 2,
- Լավագույն մագիստրոսական թեզ – 2 մրցանակ,
- Լավագույն բակալավր - 7 մրցանակ:
- Էրիկ Գևորգյանի անվան 2 կրթամրցանակ

Տարվա ընթացքում հրատարակվել են 1 դասագիրք և 1 ուսումնական ձեռնարկ:

Ֆակուլտետում պաշտպանվել են 4 թեկնածուական ատենախոսություններ: Տպագրել է 96 հոդված և 33 թեզիս:

Ֆակուլտետում իրականացվում են 2 միջազգային և 30 տեղական դրամաշնորհային ծրագրեր, որոնցից 29 տրվել է այս տարի:

Այնուհետ Ա. Կիրակոսյանը խոսքը փոխանցեց ներկաներին՝ հարցերի և ելույթների համար:

**Հարց տվեց** Արշակ Վարդանյանը: Հարցն այն մասին էր, թե ինչու բոլոր ֆիզմաթ բաժիններում չեն մտցվում պարտադիր ֆիզիկայի քննություն:

Դեկանը պատասխանեց, որ առայժմ նախարարությունում խորը չեն ընդունում ֆիզիկայի կարևորությունը հատկապես Հայաստանի համար:

**Ելույթ ունեցավ** Արշակ Վարդանյանը: Նա խոսեց ֆիզիկայի պետպատվերի տեղերի ավելացման կարևորության մասին: Նե վերջում գոհունակություն արտահայտեց դեկանի աշխատանքի վերաբերյալ:

**Ելույթ ունեցավ** Ռ. Ալավերդյանը: Նա առաջարկեց ամեն կերպ հասնել նրան, որպեսզի վերականգնվի տեխնիկական բաժիններում ֆիզիկայի և մաթեմատիկայի քննությունները լինեն պարտադիր:

**Ելույթ ունեցավ** Ե. Դայանը: Նա առաջարկեց վերականգնել կուրսային աշխատանքները:

**Ելույթ ունեցավ** Ուիս նախագահ Լիլյա Բերբերյանը, ով զեկուցեց ուսանողական խորհրդի կատարած աշխատանքների մասին:

**Ելույթ ունեցավ** “Candle” ինստիտուտի տնօրեն՝ Գրիգորյան Բագրատը : Նա առաջարկեց ակտիվացնել համագործակցությունը ինստիտուտի և ֆակուլտետի միջև և ներկայացնել մի շարք համատեղ դրամաշնորհներ:

**Ելույթ ունեցավ** Ռ.Ավագյանը: Նա առաջարկեց կոչ անել նախարարությանը սահմանելու քննությունների այնպիսի կարգ, որ եթե դպրոցի ավարտականին նաձնում են մաթեմատիկա, ապա ընդունելությանը հանձնեն ֆիզիկա և հակառակը:

Դեկանի զեկույցին հավանություն տալու հարցը դրվեց քվեարկության: Ներկաները միաձայն կողմ քվեարկեցին:

**Որոշեցին.** Հավանություն տալ ֆիզիկայի ֆակուլտետի տարեկան զեկույցին:

Ֆիզիկայի ֆակուլտետի դեկան՝

Ռ.Ս. Հակոբյան

Խորհրդի քարտուղար՝

Գ.Հ. Հովհաննիսյան